Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1334[16]-21.04.2026-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-237-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող» բառերը, իսկ «վարձակալը, անհատույց օգտագործողը» բառերը փոխարինել «վարձակալը կամ անհատույց օգտագործողը» բառերով.

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում «աղբահանության վճարը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Երևան քաղաքի» բառերը.

2) 3.1-ին մասում «աղբահանության հարաբերությունները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Երևան քաղաքի» բառերը.

3) 3.2-րդ և 3.3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

4) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում են տվյալ համայնքի ավագանու որոշմամբ՝ օրենքով սահմանած կարգով՝ սույն հոդվածով սահմանված դրույքաչափերի սահմաններում: Համայնքի ավագանու կողմից ոչ բնակելի նպատակային նշանակության առնվազն 1000 քմ ընդհանուր մակերես զբաղեցնող շենքերում և (կամ) շինություններում և շենքերից ու շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի վերաբերյալ համայնքի ավագանու որոշմամբ կարող են սահմանվել այլ՝ ավելի նվազ, դրույքաչափեր:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո: